



## Հակոբ Պարոնյան

Պտոյտ մը Պօլսոյ թաղերու մէջ

ԺԵ, ԺԶ, ԺԷ

ԺԵ.

ԻՃԱՏԻԷ

Բնակութիւն հաստատելու համար պատուական թաղ մ' է, եթէ մարդս նապաստակ ըլլայ ... լեռնէն վեր ելնելու դիրութիւն ունենալու համար :

Երանի՛ անոնց, որք նապաստակ չեն, բայց երկար շունչ ունին. վասնզի անո՛նց համար է այս թաղն: Վա՛յ անոնց, որոնց շունչը կարճ է. վասնզի անոնք արժանի չեն այս թաղին մէջ բարձրանալու. անոնց շունչը կ'էս ճանքան չհասած կսպառի, մանաւանդ երբ Գուգկունճութէն վեր ելնել ուզեն :

Հոս բնակելու համար լայնածաւալ սիրտ մ' ալ ունենալու է, որ չճաթի մարդ՝ թաղեցոյն ընթացքը քննելով :

Եկո՛ւր մտնենք նախ եւ առաջ թաղիս ծովահայեաց գբօսարանն, ուր տասնի չափ ազգայիններ օրուան խնդիրներուն վրայ կ'խօսին: Ասոնց ամենն ալ ստոյգ աղբիւրներէ լուրեր կ'հաւաքեն եւ իրարու կ'հաղորդեն: Կը փափագի՞ս այս օրուան լուրերն իմանալ :

Շատ հետաքրքիր են նոր լուրեր իմանալու :

Եկո՛ւր, իրենցսէ քանի մը քայլ հեռու նստինք եւ նոր լուրեր իմանանք: Ահա սկսան խօսիլ.

«Իբր հրաժարական տուած է այսօր :

Այո՛, տուած է, բայց Մէկայլը չէ ընդունած :

Մուշտակը կպնդէ եղեր այս կէտին վրայ :

Ես չեմ կարծեր, որ համաձայնութիւն գոյանայ, որովհետեւ Իբր Բան ընելուն պէս՝ միւս կողմէն ալ Բանը Իք պիտի ընէ :

Իքին տեղն ես ալ ըլլամ՝ այնպէս կը վարուիմ :

Դուն Մէկայլը գիտե՞ս. ի՞նչ յամառ է :

Բայց Իբր ի՞նչ իրատունք ունի Բանին երեսն այդպէս պօտալու :

Բանն ալ իրատունք չունէր Իբր վար գարնելու :

Ես չեմ կարծեր, որ միաձայնութիւն գոյանայ. վասնզի Մուշտակն Իքին կողմն է, Մեծաւորն ալ Բանը կսիրէ :

Վերջին լուրն իմացա՞ք. Մեծը բան մը պիտի խօսի եղեր :

Պզտիկը երէկ գացեր է :

Եթէ ասանկ երթայ՝ իմ կարծիքովս Բանը տարիէ մը Իք կ՛ ըլլայ :

Իքն ալ Բան կ՛ ըլլայ :

Բայց Մուշտակն ալ պիտի ըսէ. « ի նձի նայեցէք. եթէ Բանը Իք ըլլայ՝ ես ալ Իք պիտի ընեմ, ապա թէ ոչ Իք չեմ ըներ »:

Իրատունք ունիս, շատ վարպետորդի է: Մինչեւ որ Իբր Բան չընէ՝ չպիտի ընդունի: Ամիրային կարծիքն ի՞նչ է այս մասին :

Ամիրան առաջին օրը լուր առած էր ներսէն, որ Իքը պիտի շարունակէ եղեր մինչեւ որ Բանը գայ »:

Կարծեմ բաւական տեղեկութիւն առիք այս օրուան դէպքերուն վրայ. ա՛լ լրագիր կարդալու հարկ չմնաց: Օ՛ն, ելնենք եւ քիչ մ' ալ թաղային վարժարանը երթանք :

Իքը ո՞վ է. Բանն ի՞նչ է. Մէկալը կը ճանչնա՞ս ...

Եւ ոչ մին կճանաչեմ ... ահա թաղային վարժարանը :

Ատոր վրայ Ներսէսեան գրուած է :

Ներսէսեանին մի՛ նայիր դուն, ազգին ստակովը շինուած է ան :

Ինչո՞ւ ուրեմն Ներսէսեանը իր անունը դրած է վրան :

Վասնզի Ներսէսեան արքունի շինութիւններու մէջ աշխատող գործաւորներուն շաբաթականներէն գեղջ ընելով՝ գումար մը գոյացուց եւ այդ գումարը գումարելով այն գումարին հետ, գոր թաղեցին տուած էր՝ շինեց այդ քարուկիր վարժարանն, որ կանոնաւոր ...

Ի՞նչ անիրաւութիւն է աս ... եթէ քսակէն գումար մ' ալ տուած ըլլար՝ այսպէս գրելու չէր, այլ, ինչպէս սովորութիւն է՝ գրելու էր. « Ներսէսեան նուիրեց այսչափ ոսկի դպրոցիս շինութեանը համար »: Այս թաղին մէջ մարդ չկա՞յ, եղբայր :

Ըլլալու է ... շինեց այս քարուկիր վարժարանն, որ քանի մը դասարան եւ քանի մը ճեմիչ ունի. ճեմիչները դասարաններէն աւելի կանոնաւոր եղած են միշտ: Այս վարժարանին մէջ ժամանակաւ դասատու մը գանակոծուած է. կարծեմ մօտերս ալ կարգը պիտի գայ հոգաբարձութիւնը ծեծելու :

Շուտ ընենք, ելնենք սա թաղէն, չըլլայ որ մեզի ալ ծեծեն :

Թաղեցին պաղած է վարժարանէն. վասնզի անոր շինութեանը համար իր կողմէ տրուած գումարն ոչինչ համարուեցաւ եւ վարժարանին անունը Ներսէսեան դրուեցաւ :

Աղջիկներու վարժարանն ի՞նչպէս է :

Շատ աղէկ է, քարուկիր է: Հոս աղջիկներու վարժարան մ' ալ կայ, գոր Մէգպորեան բացած է եւ գոր թաղեցին գոցել կ' ուզէ: Այս վարժարանն օր ըստ օրէ յատաջ կ' երթայ :

Թաղեցին ի՞նչ կ' ընէ :

Նարտ, թողթ եւ իքի եիզ կիսաղայ եւ ընդհանրապէս լայնածաւալ սիրտ մ' ունենալով՝ կարեւորութիւն չտար վարժարաններուն փակուելուն. միայն իւր քսակը լեցնելու կաշխատի եւ միայն հացի պարկ կկրէ, ուրիշ առթի թողլով ազգային զգացում կրելը: Թէպէտեւ բացառութիւններ կան, բայց շահը կպահանջէ, որ անոնք ալ ձայն չհանեն :

Աս ի՞նչ զարմանալի թաղ է, եղբայր :

Ընկերութիւն մ' ալ կայ հոս, բայց չգիտեմ թէ ինչ կ' ընէ. կարծեմ մօտերս ուրիշ ընկերութիւն մ' ալ պիտի կազմուի՝ այս ընկերութիւնը առաջ տանելու համար :

Աս ի՞նչ անտարբեր թաղ է :

Արդէն այս թաղն հին չէ, քանի մը տարուան թաղ է. ուրիշ թաղերէ ձանձրացողները հոս եկած են. ուստի այս թաղը Պօլսոյ միւս բոլոր թաղերուն թերութիւններէն մէյմէկ քիչ ունի :

Ընթերցասիրութիւնն ի՞նչպէս է գոնէ :

Հայերէն լրագիր կարդալն արգիլուած է. եւ այս արգելքին դէմ վարուողը կա՛մ երեք ոսկի տուգանք կը վճարէ կամ տասնըհինգ օրէն մինչեւ ամիս մը բանտարկութեան կդատապարտուի: Հոս կկարդացուին ընդհանրապէս Թէրճէմանը հաքըքաթ, Վաքըթ եւ Ճերիտէի հավատիս լրագիրները :

Երիտասարդութիւն չկա՛յ հոս :

Չկայ: « Այս թաղին կլիման, կ' ըսէր մէկ բարեկամս, երիտասարդի մագերն շուտով կը ճերմկցունէ. բայց ճերմկցնելէն վերջն ալ դեռ շատ կապրեցունէ. ասոր համար երիտասարդը դեռ մագերնին չճերմկցուցած եթէ ուրիշ թաղ մը երթան, եւ ուրիշ թաղերու մէջ մագերնին ճերմկցուցած անձինք հոս գան՝ շատ լաւ եւ օգտակար կ' ըլլայ :

Անհասկանալի թաղ մը :

Մեծագոյն մասն առանց օղի խմելու չկրնար հանգիստ ընել. հոս ընդհանրապէս շատ կը ծխեն եւ քիչ կ' ուտեն :

Քի՞չ ուտելու համար շատ կը ծխեն, թէ շատ ծխելնուն համար քիչ կ' ուտեն :

Առաջինը հաւանական է. վասնզի կեսարացիներ կան հոս: Քիչ կ' ուտեն՝ բայց գեղեցիկ օդով կը սնանին: Թաղեցին ընդհանրապէս նիհար է: Թաղս ջերմեռանդ քիչ ըլլալուն պատճառաւ եկեղեցի շինուած չէ հոս՝ իբրեւ ատելորդ ծախք. թաղեցիներէն մէկ քանին երբեմն Սէլամսրգի եկեղեցին կ' երթան, երբեմն ալ Քուզկուճուք :

Իգական սեռն ի՞նչպէս է :

Կիները գեղեցիկ են, բարեձեւ, կրթութեան հակամէտ: Կիներն իրենց մայրենի լեզուն Սէլամսրգի կիներէն շատ աղէկ կխօսին: Այս թաղի կիներուն տանտիկնութիւնը Իսկիտարի թաղերուն եւ ոչ մէկուն մէջ տեսնուած է: Երեսի ներկը միայն քիչ մը չափէն ատի յառաջ երթալու վրայ է հոս. ծեր այրերն ալ երբեմն այս ներկէն կգործածեն: Նորածնութեան մասին Գատրգեղցիներուն չափ յառաջ գնացած չեն: Հոս կիները գեղեցկաձայն են եւ միշտ տաճկական երգեր կերգեն, ինչպէս որ իրենց ամուսիններն ալ տաճկական սէրի կհագնին: Թաղիս մէջ մեծ ֆէսը շատ յարգի է. երբեմն իրենց գլուխը կդնեն այնչափ մեծ ֆէսեր, որոնց իւրաքանչիւրին մէջ չորս օխա խաղող կդրուի :

Օդը խիստ է. քաջառողջներուն չդպչիր, վատառողջներն անդիի աշխարհ կդրկէ :

Չայերէ բնակուած տուներուն թիւը հինգ հարիւրի մօտենալու վրայ է, իքի եիւզ խաղացողներուն թիւն ալ վեց հարիւրի:

ԺՁ.

## ՄԱՄԱԹԻԱ

Օղի շխմողները գատուին ... անոնք իրատունք չունին այս թաղը մտնելու :

Բաժնուին մեզմէ նաեւ անոնք, որք սովորած են ծառայ են ի. հոս ամեն մարդ տէր է, վասնզի ամենքն ալ իրենց աշխատութեամբն եւ արհեստովը կապրին եւ, հետեւաբար, պէյ երու, էֆէնտի ներու ոտները լզելու պարտաւոր չեն :

Մեզի հետ չգան նաեւ այն անձերն, որք արձակ հայիոյել գիտեն. անոնք հոս կծաղրուին, վասնզի սամաթիացիներուն հայիոյութիւնն գրեթէ միշտ ոտանաւոր է :

Բնաւ հոս պտըտելու չեն այն օրիորդներն կամ տիկիներն, որոնց երեսներուն վրայ կարմիրը անպակաս է. սամաթիացի կարմիրն միշտ հակիթներու վրայ տեսնել կ' ուզէ :

Ամենեւին գործ չունին հոս այն կիներն, որք ամեն քայլափոխին կէս մէջքէն կկոտորտուին թղթայ կիներուն պէս, գորս հէյալ ը կներկայացնէ. վասնզի սամաթիացի այնպիսիներու վրայ կխնդայ :

Այս թաղին մօտենալու չեն նաեւ այն երիտասարդները, որք կամ շատ թեթեւ են եւ կամ շատ ծանր :

Մարդ երթալու չէ ուրեմն հոս :

Ինչո՞ւ. ամեն մարդ ստիպուած է այդ թերութիւններն ունենալու: Եկո՛ւր քեզի հետ երթանք. բայց այնպիսի փողոցէ մը մտնենք, որ մէկէ մը չտեսնուինք.

վասնզի տեսնուելնուս պէս մեր օձիքէն կքաշեն ու գիներտուն կտանին:

Տեսնուեցանք ... ահա քանի մը երիտասարդներ սա փողոցէն ելան եւ խնդալով մեզի կը մօտենան ... մօտեցան :

Օ՛օ՛օ՛, բարի էք եկեր :

Շնորհակալ ենք :

Եկէք նայինք, եկէք. Հայկական ընկերութիւնը երթանք եւ քանի մը հատ տնկենք :

Հայկական ընկերութիւնը օղի խմելու համար հաստատուած ընկերութիւն մ' է :

Նպատակն այն չէ ... բայց ո՞ր ընկերութիւնն է, որ նպատակին ծառայած ըլլայ :

Գոնէ անունը փոխեն :

Ինչո՞ւ ... աղէկ գիտես, որ Հայկ օղի չէր խմեր :

Պետրէ, Հայկական ընկերութեան օղին թէ՛ աղէկ չէ եւ թէ՛ սուղ է. Օրմանօզին տանինք մեր բարեկամները :

Օրմանօզին ալ երեսուն աստիճան է, եղբայր. անցեալ շաբթու օխա մը տիւզ խմեցի հոն եւ դպաւ ինձի :

Եթէ ինձ հարցուէր՝ ես Կիւմիշ հալցալը ին կը տանէի բարեկամներս :

Եղբա՛յր, ան ալ օղիի հետ կտոր մը պանիր միայն կու տայ :

Ալթը ն օլուք ին երթանք :

Եղբայրներ, մենք թաղին մէջ քիչ մը պիտի պտըտինք :

Թաղին մէջ մարդ չկայ. ամենն ալ գինետուններու մէջ են այսօր :

Մահտեսիին երթանք. մարդը հայ է եւ պատուական օղի ալ ունի :

Շատ աղէկ, Մահտեսիին երթանք :

Լա՛ւ ... երթանք ...

Քանի մը փողոց դառնալով՝ մտանք Մահտեսիին գինետունն, որու գինույ սեղանին առջեւ կայնած կը խմէին տասնի չափ հաստաբազուկ ձկնորս ազգայիններ :

Տամ աման, աման էֆէնտիմ, աման ...

Թարալալա թարի լալալա, թիրալալա, թարիլալալա :

Պինի վար ...

Թարալալա թարիլալալալա ...

Թիրալալա թարիլալալալա ...

Մենին կիպի մանիճիլեր տեֆթերիմտե... պինի վար :

Այս բարեկ ...

Թարալալա թարիլալալալալալա ... թիրալալալալալալալալալալա ... օ՛օօօ՛հ :

Այս բար ...

Տամ աման աման աման եեր պենի ...

Ա՛ն նայինք տա՛յը եւ տնկէ՛, ըսաւ ասոնց մին իր քովինին՝ անոր կուրծքին հարուած մը տալով իւր ափով :

Այս հարուածն, որ անոնց քով մտերմութեան նշան կը համարուի, եթէ մեզ տրուի՝ գերեզմանի նշան կը ...

Պիր կիզելի մայիլ օլտում եեր պենի ...

Թարալալա թարիլալալալալա ...

Եեր պենի... իշերիմէ պիր քուրտ տիւշմիւշ կեճէ կիւնտիւզ ...

Աա՛ա՛ա՛ա՛հ ... թարալալալալալալալալալա :

Հոս նայեցէք, տայի ՛ներ, մանին ձգեցէք ու ցնծացէք... վարժանին գանձանակն է :

Օօ տղար, դպրոցին թապախ ն է. տուէք նայինք ... խմենք, բայց դպրոցնիս ալ չմոռնանք :



Ա՛ն վարպետ :

Բոնէ վարպետ :

Ա՛ն :

Շէն կեցէք :

Տամ աման... ակա՛ն.

Պիզ վերելիմ բարալարը եւսին թաղական :

Ծօ տղա՛յ, ինչո՞ւ անանկ բաներ կխառնես :

Քեզի ի՛նչ պէ, վայ կէշմիշի քրնալը :

Հիմա մեռելներուդ պատկած տեղէն կը սկսին, հա՛ :

Երթանք ... աֆ կ՛ ընէք, աղա ներ. ձեզի ձանձրութիւն տուինք :

Չէ, չէ :

Ջրուցեցէք նայինք, բարեկամներ. քիչ մը ձեր թաղին վրայ խօսինք :

Բարեկամ, մեր թաղին ժողովրդեան մէկ մասին պատգամաւորութիւնը տեսաք  
ահա. ասոնք ձկնորսներն են, որ իրենց օրականը հանելուն պէս գինետուն կու  
գան եւ կը խմեն. այսու ամենայնիւ, ինչպէս տեսաք՝ դպրոցին համար միշտ  
ստակ կու տան. մասնաւոր սէր ունին թաղին վարժարաններուն համար: Միւս  
մասին ալ ներկայացուցիչները կրնանք համարուիլ մենք, արհեստաւորներս: Հոս  
ազնուապետութիւն չկայ. մեր դրօշակն է ազատութիւն, հաւասարութիւն,  
եղբայրութիւն: Եթէ դրօշակին վրայ պարապ տեղ մնացած ըլլար՝ տիւզ բառն ալ  
պիտի աւելցնէինք հոն: Հոս բնիկ էֆէնտի չկայ. իբրեւ արտաքին բերք՝ քանի մը  
էֆէնտի ներ կը գտնուին երբեմն :

Թաղական խորհուրդ ունի՞ք կանոնաւոր :

Թաղական ըլլալն շատ դժուար է հոս, իսկ ըլլալէն վերջն եթէ առաջին շրջանն առանց կոտոյ անցունէ՝ արուեստահանդէս դրկուելու չափ հագուագիտ քան մը եղած կ' ըլլայ. իսկ եթէ երկրորդ շրջանին դարձեալ թաղական ընտրուի՝ անպատճառ կարտաքսուի: Հոս ամեն թաղէն ատելի շարժում կայ: Ասկէ երկու-երեք ամիս առաջ քսան - երեսուն երիտասարդներ թաղական խորհրդարանը մտան եւ թաղական խորհրդին թելէն բռնելով դուրս հրամցուցին գայն :

Ինչո՞ւ :

Վասնզի դպրոցն աղէկ չէին նայեր: Պատրիարքարանն ալ առժամանակեայ թաղական մը տուաւ մեզի :

Նոր թաղականն ե՞րբ պիտի ընտրուի :

Երբ որ հին թաղականը դուրս հրամցնող երիտասարդներն մեղայ ըսեն :

Եթէ չըսեն :

Քուէարկութեան չպիտի մասնակցին :

Վարժարաններն ի՞նչպէս են :

Երկու տարի է, որ շտկելու կաշխատին. ընդհանուր կարծիքն այն է, թէ տաս տարիէն կարելի պիտի ըլլայ գանոնք բարեկարգելը: Հոս ծնած է Մինէճի Անդրանիկն, որ ժամանակաւ շատ աշխատած է այդ վարժարաններուն համար. անգղիերէն խօսող հայն առաջին անգամ Սամաթիայէն ելած է. ջրհանկիրներու մէջ ալ այսօր անգղիերէն կարդացողներ կգտնուին :

Հիմա ո՞վ կը հսկէ դպրոցներու վրայ :

Այսինքն ո՞վ չհսկեր, ըսել կ' ուզես :

Հիմա ո՞վ է, որ չհսկեր դպրոցներուն վրայ :

Երբեմն հոգաբարձուներու եւ հոգաբարձուհիներու մէջ կարծիքներու անհամաձայնութիւն ծագած ըլլալով՝ հիմա որոշուած է, որ ամուսնացած թաղականներն իրենց կիներովը չհսկեն վարժարաններու վրայ: Հիմակուան թաղականներն այնչափ օրինապահ են, որ ընդհանուր Ընդհանուր Դատախազի դրութիւնն կառավարութենէ ընդունուելէն ի վեր՝ թաղական խորհրդոյ մէջ ալ ամեն օր հարիրէն աւելի մասնաւոր դատախազներ կը գտնուին :

Հայկականէն գատ ընկերութիւն չկա՞յ հոս :

Շատ մը ընկերութիւններ կային ատենօք, բայց հիմայ չկայ : Պարզասիրաց ընկերութիւն մը կայ միայն, որ կիներուն պարզ հագնիլ պիտի սորվեցնէ. կարծեմ ասոր ալ անունը կայ միայն :

Եկեղեցասիրութիւն կա՞յ հոս:

Այո՛, բոլոր թաղերէն աւելի. թաղեցին հաւասարապէս կսիրէ ազգն եւ եկեղեցին. բայց ասկէ հետեւցնելու չէ, թէ նուազ կսիրէ օրին, գոր կխմէ երեկոյեան ժամը մինչեւ մէկ ու կէսին: Գինետան մէջ մէկուկէսէն աւելի նստողներն կբամբաստին, իսկ մինչեւ մէկ ու կէս նստելով ճաթելու չափ օղի խմողներն մեծ համակրութիւն կը վայելեն՝ իբրեւ օրինաւոր մարդեր: Եկեղեցոյն գորգերն այնչափ շատ կհամբուրուին, որ ամիսն անգամ մը կը պատառուին. թաղականը այս կէտը նկատողութեան առնելով տեսաւ, որ այդ համբոյրներուն գորգ չպիտի դիմանայ, ուստի որոշեց գորգերը վերցնել: Ժողովուրդը հիմայ հողի վրայ կը կայնի եւ հողը կը համբուրէ. թող որ եկեղեցոյ հողն ալ հինգած է այդ համբոյրներէն :

Սամաթիացին ցած ձայնով խօսիլ չգիտեր. թէպէտեւ երբեմն գաղտնիք մը հաղորդելու համար ականջդ ի վայր կխօսի, բայց դարձեալ այդ խօսքը Եւնի Գաբուէն կլսուի :

Ինչպէս վերը յիշեցինք՝ քծնիլ չսիրեր, շողոքորթութենէ կփախչի, բայց երբ ազգային կոի մը ելնէ՝ հոգով մարմնով կնետուի. իսկ եթէ ազգային վէճ մը չըլլայ՝ կաշխատի վէճ մը հանելու: Առանց վէճի կարելի չէ իրեն ապրիլ :

Սամաթիացիներուն մէկ մասն ոսկերիչ է, եւ այս հերիք է հասկցնելու համար, թէ կերակուրի մասին ո՛րքան բծախնդիր է: Ամենէն լաւ միսն, ձուկն, կարագն, պանիրն, ապուխտն եւ պտուղն սամաթիացիին կ'երթան: Մեծ կարեւորութիւն կը տրուի հոս փորին, զոր գոհացնելու համար բան մը շխնայուիր: Հոս փորը պճնասէր է :

Սամաթիացին թաղին մէջ հայերէն, իսկ շուկան տաճկերէն կը խօսի :

Դառնանք գեղեցիկ սեռին, որ իրօք գեղեցիկ է, պարզասէր եւ աշխատասէր: Սամաթիոյ տիկիները դաստիարակութեան պէտքը զգացած են եւ կ'աշխատին, որ իրենց աղջիկներն ալ ուսում եւ կրթութիւն առնեն, մինչդեռ ուրիշ թաղի մը տիկիներն կփափագին, որ իրենց աղջիկներն բրինձի փոշի եւ կարմիր ներկ առնեն: Թաղիս տիկիներն շատ մը թաղերու այրերէն աւելի ազգասէր են: Առաջին անգամ Սահմանադրութեան տարեդարձը պատուող կինը սամաթիացի էր :

Եթէ Պօլսոյ միւս թաղերն Սամաթիոյ հետեւող ըլլան՝ Պօլսոյ ժողովուրդն քիչ ատենի մէջ զգալի փոփոխութիւն կկրէ, բայց օղիին գինն ալ շատ կբարձրանայ :

Թաղիս օդն շատ աղէկ չէ. ուստի զայն բարեխառնելու համար է, որ թաղեցին օղին շատ կխամէ :

ԺԷ.

## ԳՈՒԶԿՈՒՆՃՈՒՔ

Վոսփորի մէկ հոսանքը կպահանջէ, որ Գուգկունճութի նաւամատոյցին մերձենալու համար՝ նաւավարն իւր նաւակն միշտ դէպի Պէյլերպէյ ուղղէ եւ դէպի հոն թի քաշէ. վասնզի եթէ դէպի Գուգկունճութ ուղղուի՝ Իսկիւտարի առջեւ կը գտնէ ինքզինք: Գուգկունճութցին միշտ այս ճանքով երթեւեկելուն համար սովորութիւն ըրած է իրեն՝ եկեղեցի երթալու համար դէպի Պէյլերպէյի նաւամատոյցին զբօսարանն ուղղել իւր գնացքը, վասն զի եթէ դէպի եկեղեցին առնէ իւր քայլերն՝ ինքզինքը գինետուններու մէջ կգտնէ: Տամաքն ալ ունի իւր հոսանքները :

Այս թաղն թեպետեի պաշտօնապէս Իճատիէյի հետ միացած է, բայց  
ոչ-պաշտօնապէս չէ միացած եւ ոչ մէկ թաղին հետ :

Օրհնեա՛լ է Աստուած. հոս բնաւ կոհի չպատահիր թաղին վարժարանին վրայ ...

Փա՛ռք քեզ Աստուած. վերջապէս տեսանք թաղ մը, ուր կոհի չըլլար եղեր  
վարժարանին վրայ: Կեցցէ՛ Գուգկունճուքցին ... Գուգկունճուքցիին օղի մը տար  
ինձմէ ...

Այո՛, Գուգկունճուքին մէջ բնաւ կոհի չեն յարուցաներ թաղին վարժարանին վրայ.  
եւ ասոր պատճառն ալ կրնաք գուշակել, եթէ ըսեմ ձեզ, որ Գուգկունճուքի մէջ  
ազգային վարժարան չկայ ...

Հիմայ հասկցուեցաւ, որ թաղին վարժարաններն են եղել կոռոյ պատճառները :

Արդարեւ կայ պզտիկ շէնք մը, ուր պզտիկ տղաներ կ' երթան քնանալու համար:  
Թաղեցին անգամ մը սրդողած ըլլալով վարժարանին դէմ՝ ուխտ ըրած է լումայ  
մը չտալ անոր համար, եւ հիմայ ուխտադրուժ չսեպուելու համար՝ ստիպուած է  
քսակին բերանը չբանալ իւր վարժարանին համար :

Մինչեւ այսօր հոս թաղային կոհի ալ տեսնուած չէ, եւ ասոր ալ պատճառն սա է,  
թէ այս թաղին մէջ ...

Թաղ չկայ, այնպէս չէ՞ :

Այս թաղին մէջ եթէ մէկը սխալի եւ սեւին ճերմակ ըսէ՛ իւր դէմը չգտներ ուրիշ  
մէկն՝ որ ելնէ ըսէ. ո՛չ, այդ սեւ է եւ ոչ ճերմակ: Ահա ասանկով վիճաբանութիւն  
բնաւ չըլլար, գլուխներն առաջուան պէս անփոփոխ կը մնան եւ միայն ֆէս երը կը  
փոխուին, եւ այն ալ երկու տարին անգամ մը :

Հոս տարին երկու հարիւր յիսուն օր կը տօնեն եւ կը հանգչին: Ոչ որ կը փափագի  
հարստութիւն դիզելու, փառք վաստկելու եւ համբաւ հանելու. ամեն մարդ  
կփափագի ձուկ դիզելու, ձուկ վաստկելու եւ ձուկ հանելու. տկար ստամոքս  
ունենալով՝ ոչխարի կամ կովու միսը կդպչի իրենց: Եթէ իրենց սիրտերուն մէջ քիչ  
մը դպրոցասիրութեան եռանդ ունին՝ ան ալ կմարի այն գինիէն, գոր կը խմեն

ձուկին վրայ եւ որ կը թափուի իրենց եռանդին վրայ: Եթէ օդի խմէին՝ թերեւս եռանդն բորբոքէր. բայց ասոնք ուրիշ թաղերու ազգայիններուն պէս երեկոները գինետուններու մէջ շատ չեն անցուներ, այլ քանի մը գաւաթ խմելով՝ իրենց տուները կ'երթան :

Ասոնց սովորութիւնն է՝ ամեն գիշեր կամ ամեն կիրակի կամ տօնի օրերն մէյմէկ տուն հաւաքուիլ եւ զբօսնուլ: Ասոնց խօսակցութիւնն ընդհանրապէս կկազմուի նարտէ կամ խաղի թուղթէ: Շատ անգամ ալ նաւամատոյցի զբօսարանին մէջ նարտ կխաղան հրէաներու հետ, որոնցմէ զուարճախօսութեան դաս ալ կ'առնեն Անի ոճով: Նարտ կամ թուղթ խաղալու աստեն կորսնցնողը իրաւունք կ'ունենայ ուզածին եւ կրցածին չափ հայիոյութիւն ընելու. վաստկողը կատարեալ լռութիւն պիտի պահէ եւ երբեմն քթին տակէն պիտի խնդայ, ընկերն ա՛լ աւելի բարկացնելու համար: Հայիոյութեան մասին՝ այս թաղն պահպանողական կուսակցութեան կը վերաբերի :

Այս թաղը կբնակէր վեհմափայլ եւ բարձրապատի Ստեփան փաշա Ասլանեան, որ, ինչպէս յայտնի է՝ Երուսաղէմի հաշիւները անձնանուիրաբար քննելու համար երկու հարիւր ոսկի օսմանեան առաւ վեհանձնաբար :

Կոկիկ եկեղեցի մը կայ հոս, որ կոկիկ եւ գեղեցկաձայն քահանաներ ունի, բայց կոկիկ ջերմեռանդներ չունի :

Իգական սեռն ալ գրեթէ արականին պէս կեանք կ'անցունէ.

ուսումնասիրութեան վրայ գաղափար ունենալու պատրաստութիւն չունի դեռ:

Օրուան կէտը կ'անցունէ տապկելով այն ձուկերն, որք արականէն կուղղուին:

Ինչպէս Քերականութեան, նոյնպէս ալ Գուգկունճութի մէջ արականն

նախապատիւ է իգականէն. հոս կինն իւր էրկանը յետեւէն կ'երթայ, մինչդեռ

Բէրայի մէջ ասոր հակառակն է եւ Էրիկն կնոջը յետեւէն երթալու ստիպուած է

ըստ աւետարանին, թէ « թողցէ այր գհայր եւ գմայր իւր եւ երթիցէ գհետ կնոջ

իւրոյ »:

Գուգկունճութի կիները աշխատասէր են: Նորաձեւութեան մասին Իճատիէյէն կ'առնեն իրենց դասերը :

Բամբասանք ընելու տրամադրություն չունին շատ, իսկ հագուստի մասին  
բամբաստելու բառական յարմարություն ունին :

Գուգլյունճութի օդը հոտած ձուկ կը հոտի եւ կը ստիպէ հոն գացողն իր քիթը  
բերանը ծամածռելու: Օդին պատճառաւ է, որ ընդհանրապէս

Գուգլյունճութիները ծամածռած երես ունին :